

ՔՌԻԿԻ ԲԱՂԱՐՁ

Պախթիարի ջաղացքին ջաղացպանը՝ Լեոնոն, չէր հասկնար, թե ինչո՞ւ օրե օր ուժե կիյնար: Հիվանդ չէր, տեղ մը չէր ցավեր, հիվանդություն մը չքաշեց, ի՞նչ կըլլար իրեն:

Կերած են ըսեր, ամեն ատենվան կերածն էր: Ջաղացպան մը ի՞նչ կուտե Բադարջ կեփե ու կուտե: Իր խելքովը ադ տարի նույնիսկ ավելի աղեկ պետք էր ըլլար, ինչու որ՝ ավելի ուժատու բաներ կերավ: Շաբաթը քանի անգամ քյոմպե, պաճըմաճ եկավ իրեն: Շապան աղային կինը, Թամամ խաթունը, որ հացատեր կին էր ու ջաղացքին ամենեն մոտ դրացին էր, ամեն անգամ որ թները սոթտեց, նստավ, ու յուրոտ պաճըմաճ բացավ, թոռներուն հետ իրեն ալ դրկեց: Ասոնցմէ զատ՝ ադ տարի ամեն օր քոիկի Բադարջ եղավ կերածը: Ինչ ալ չըլար, սովորական կարմիր ցորենի բադարջեն ավելի սննդարար չէր քոիկ ցորենի այլուրին ճերմակ բադարջը:

Բայց ի՞նչ կուգէք ըսեք, պատճառը ինչեն կուգեր ըլլար, զինքը մտատանջողը ան էր, որ ինք աղեկ չէր ըլլար: Ատոր համար ձեռքը բանի մը զարնելը չէր գար, եռանդը մարեր էր ներսը: Կերելիսի պեկերը, Մահմուտ պեկը, եղբայրը՝ Քյուչուք աղան լուր դրկեցին, որ ամեն տարվան պես՝ իրենց Մաթիի, Կոնտոսիի գետերուն ջաղացքները երթար, երկանաքարերուն կոանը ըներ: Ականջի ետն նետեց, չպատասխանեց, չգնաց, մինչև որ Քյուչուք աղան ինք եկավ. հասկցավ, որ չպիտի ըլլար, չկրցավ մերժել ու ակամա գնաց:

Ետ դառնալուն՝ Ղըզըլդալեի Համիտ պեկին դոնախին առջնեն անցավ, Համիտ պեկը տեսավ պատուհանեն զինքը, կանչեց ու ցերեկվան ճաշի վար դրավ: Ամառվան նստած մեծ սենյակը, սեղանը պատրաստեցին, պղնձե մեծ ափսեներու մեջ հավանաթ բերին, ետնեն զառավաթ բերին: Մարդ հավանաթը կամ զառավաթը չուտե՞ր: Շատ ստիպեցին, հազիվ մեկ քանի ական պատառ առավ: Շիտկե շիտակ չնայեցավ անգամ Ջարի խանումին, պեկին կնոջը, որ այրերեն ամենևին չէր պահվեր, բարի եկեր ես ըսավ իրեն, ու երկայն գուրնի էնթարիով քանի անգամ անցավ դարձավ առաջքեն: Մինչդեռ, գավառին բոլոր այրերուն պես, հիանալեն ավելի՝ պաշտելու պես կնայեր անոր: Առջի տարի ձի հեծած, ջաղացք եկած էր իրենց աղոնին օրը, միջոց մը անանկ եղավ, որ աղախինները չկային, անպարը այլուրով լեցված էր, պարպել պետք էր. Ջարի խանումը ինք բացավ պարկին բերանը ու մոտեցուց, շունչ շունչի եկան, հուզումեն ինքզինքը կորսնցուց, թիով այլուրը պարկը պարպելու տեղ դուրսը թափեց:

Մինակ Ջարի խանումին չէ. Ամեն տարվան պես՝ այդ տարի կալերը ներս առնվելէ վերջ ջաղացքը ծփաց աղոնի համար եկող կիներով: Ասոնք գրաստ չունենալով, շալակով իրենց ցորենները կբերեին, կարգի կսպասեին, կաղային ու, նորեն շալկելով, իրենց տունները կդառնային: Ասոնց մեջ Պանտրայեն եկող երկու ներեր կային, պզտիկեն շատ կախորժեր, որովհետև իր քենիին հարսին՝ Վերիթաղցի Վարդոյին, շատ կնամներ: Սեփ-սև աչքերը,

սեփ-սև հոնքերը, դեմքին կլորությունը, հապա այտերուն զատկական հավկիթի պես կարմրությունը, հապա նայվածքը, հապա գլզլալով խնդալը, իսկ և իսկ ան էր: Լեոնտ ամենուն պատմած էր, ամեն կին գիտեր, որ իրեն հետ խոսած ատեն «Լեոնտ դայի, սենին, Վարդոն, սենին Վերիթաղլըն» կըսեին անոր համար: Ադ տարի ամենքը զարմացան, որ Լեոնտ բնավ չհետաքրքրվեցավ իր պանտրմացի Վարդոյով. հասկնալ ուզեցին՝ ու չպատասխանեց:

Առտվընէ մինչև իրիկուն ամեն օր ան իր հիվանդութենէն զատ ուրիշ բանի վրա չէր խորհեր, ու չէր գիտեր, թե ի՞նչ ըներ, որ աղեկնար: Որո՞ւ որ հարցուր.

– Վախ է, դուն վախցած ես, – ըսին:

Չէր համոզվեր ու ալ ավելի կմտմտար:

Ղըրլանդըճ ուշադիները եկան ու անցան: Ասոնք հինգ-վեց հոգինոց խումբերով կըլլային միշտ, ամենքն ալ ձիավոր: Իրենց ըսածին նայելով՝ Մարաշի կողմերէն կազային, ամենքն ալ սև, միօրինակ ակնոցներ կկրէին, ու սրածայր, սև գլխանոցներով էին: Մարդ մինակ ըլլար, ամայի տեղ մը հանդիպելու ըլլար անոնց, ավազակախումբ մը կկարծեր ու լեղապատառ կըլլար, բայց, իրենց հայտարարությունով, ամենքն ալ բժիշկ էին, աչքի ցավի օճախներու կպատկանէին, աչքի հիվանդությունները կդարմանէին: Միշտ այս եղանակին, կալերէ վերջ կհայտնվէին, երբ ամառվան, կամ կալերու փոշիներէն կըլլար, ի՞նչ կըլլար, աչքի ցավերը կշատնային, ու գավառէ գավառ կշրջէին: Իրենց ձիերէն երբեք չէին իջնար, դարմանումը ձիերու վրա նստած կընէին, սև հեղուկ մը, կկաթեցնէին որուն աչքը որ կցավեր, ու աչքը անմիջապէս դեփ-դեղին կըլլար: Լեոնտ անոնց ալ հարցուց ու, զարմանալի բան, անոնք ալ ամենուն ըսածը ըսին:

– Դուն քու վախնալդ չես գիտեր, քունիդ մեջ վախցեր ես, – ավելցուցին:

Ղարակապանի ճիշտ դիմացը, ճոկի գլուղէն վեր, սարեվանդի մը վրա, ճոկի պապային զիարեթը կա: Սարևանդը համակ կապարագոյն ժայռերէ կազմված է: Զիարեթը պատ անգամ չունի, ավելի ճիշտը՝ մարդկային ձեռակերտի հետին նշանը անգամ չկա, չորս անջատ ժայռեր են, իսկ անմիջապէս անդին, մեկ կարգի վրա ու լեռան մեջ թաղված երեք ժայռեր շարված են, որոնց գագաթները միայն կտեսնվին: Երեք տետէներու գերեզմաններ են՝ կըսեն ատոնց համար, թէն գերեզմաններու ամեննին նմանություն չունին: Ադ գերեզմանները գացողը, բժշկություն խնդրողը, եթէ վախի հիվանդութենէ կտառապի, անպայման կբժշկվի: Առտվան մը դեմ, լուսուն աստղը դեռ նոր կծագեր, Քերվան Ղըռանը Ղարակապայի զիարեթին հավասարությանը եկած էր, Լեոնտ հոն հասավ: Երեք անգամ զիարեթին ու գերեզմաններուն շուրջը դարձավ, յուրաքանչյուրին առաջքէն, գետինէն ծռեցավ ու երեք մատերով որչափ կըռնվի, ճոկ, այսինքն ուխտի ավագ առավ, կերավ ու մեկնեցավ: Օգուտ մը չգտավ: Հիվանդությունը չանցավ:

Յերեկ մը ջաղացքը աղոն չկար, աշնանավերջի արևին մեջ, մինակը, դուռը նստեր էր, կոնակը պատին տվեր՝ կմրափեր, երբ հանկարծ աչքերը բացավ ու սահմոկեցավ:

Մեկը կայներ էր դիմացը, քրքումի գույն մորուքով, ու ի՛նչ մանր աչքեր ուներ: Մարդը մոտեցավ իրեն:

- Հասկցա, մեկեն տեսար իս, ատոր համար վախցար, մի՛ վախնար, մի՛ վախնար, - ըսավ, - ես օտարական չեմ: Դուն Լեոնտն չե՞ս: Քու բուն անունդ Ավետ չե՞: Հասակդ երկայն ըլլալուն համար չե՞, որ Լեոնտ կկանչեն քեզի:

- Այո, - ըսել փորձեց Լեոնտ, բայց չկրցավ:

Մարդը նորեն ժպտեցավ, մորուքին պես դեղին ժպիտով մը:

- Տես, ինչպե՞ս քեզ գիտեմ, դուն իս ճանչցա՞ր:

Լեոնտ չէր գիտեր ի՛նչ ըսեր, այո՞, թե՛ ոչ:

- Հարյուր անգամ ալ ջաղացքդ չե՛մ եկեր: Ավանը չե՞ս գիտեր դուն: Ես ավանցի չե՛մ:

Լեոնտ նորեն շփոթեցավ: Իսկ մարդը շարունակեց ժպտիլ:

- Համիտ պեկին դոնախը գառավաթը ինչո՞ւ չկերար: Ինչո՞ւ չնայեցար Ջարի խանումին: Էրտեմշեցի Թելո պեկին հարսեն՝ Ճեննեթ խանումեն, ավելի գեղանի է, դուն չէի՞ր ըսեր: Հասուն ցորեններու չինձված արտերուն երեսը կարմրավուն գուրջի մը պես մոն մը կըլլա, նայելու ըլլաս վրան՝ աչքերդ կառնեն, ադ մոնին նմանցնողը դուն չէի՞ր, անոր երեսներուն գույնը: Մարը Չիչեքի մեղրին մեջ, արևին որ բռնես, շաղվիղք մը կերնա՞ ոչ դեղին, ոչ հակինթի գույն է. թե դեղին է, թե հակինթի գույն է, անոր ծամերուն, թարթիչներուն գույնը անկե է, դուն չէի՞ր ըսողը:

Պահ մը ընդհատեց, նորեն շարունակեց.

- Աս տարի Պանտրայեն եկող երկու ներերեն պգտիկով ինչո՞ւ չհետաքրքրվեցար, հետը ինչո՞ւ չխոսեցար: Քենիիդ հարսին՝ Վերիթաղցի Վարդոյին հետ դուն չէի՞ր բաղդատողը: Աչքերը, հոնքերը, դեմքին բոլորակը, այտերուն կարմիրը, շուրթերուն տորոնը, հապա՞ նայվածքը, հապա՞ գլգլցնելով խնդալը, իսկ և իսկ նույնը չէ՞ր գար քեզի: Թող որ Ջարի խանումին ըլլա, թե պանտրացի հարսին ըլլա, ընելիք բան մը չունեիր դուն: Քու սիրտդ խելոք չէր կենար. ան ըսել կուտար քեզի ասոնք: Շիտակ չե՞ ըսածս:

Լեոնտ շրթերը շարժեց, չկրցավ պատասխանել:

- Ես գիտեմ՝ դուն ինչո՞ւ աս տարի ամեն բանե պաղեր ես: Դուն հիվանդ ես: Ինչո՞ւ ատանկ չոքեր ես: Ո՞ւր է իմ գիտցած Լեոնոս, լեռան պես, անունիդ պես մարդ էիր: Դուն երկու, երեք մարդու ուժ ունեիր: Ի՞նչ եղավ քեզի: Ըսե ինձի՝ ի՞նչ կուտես:

Լեոնտ վերջապես կրցավ պատասխանել.

- Բաղարջ կուտեմ:

- Ինչե՞ բաղարջ:

- Քոիկի բաղարջ:

– Հիմա հասկցա, քոկի բաղարջեն է քու հիվանդությունդ: Չե՞ս նայած քոկի հասկին, կարմիր ցորենի հասկին կնմանի: Ան սուտ ցորեն է: Ուժ տալու տեղ ուժդ կառնե: Կարմիր ցորենի այուրեն բաղարջ պիտի ուտես, որ առջի ուժդ վրադ գա:

Հանկարծ ծանրություն մը փլավ Լեռնոյի ներսը: Շնչառությունը վերսկսավ, լեզուն բացվեցավ:

Խոսիլ ուզեց, մարդը փնտրեց, բայց չկար ան:

Իսկույն ոտքի ելավ, թոնիրը վառեց, մուգի այուրեն, այսինքն երկանաքարերու բոլորտիքը հավաքվածներեն, որ իր բաժինն էր, բաղարջ շաղվեց, եփեց, նստավ կերավ: Քանի կերավ, ախորժակը բացվեցավ:

Կարելի է՝ չեք հավատար, հիվանդությունը գնաց վրայեն: Կարմիր ցորենի բաղարջը աղեկցուց զինքը: Առջի ուժը վրան եկավ: Երկու մարդով չվերցված այուրի պարկերը մինակը գրկեց ու ջորիններուն բեռցավ: